

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ կառավարության գործունեության 2018-2022 թվականների միջոցառումների ծրագրով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) մասով նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ

ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N1030-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով Կոմիտեի մասով նախատեսված է թվով 9 միջոցառում:

Նշված 9 միջոցառումներից 2018 թվականի մասով նախատեսված է թվով 4 միջոցառման իրականացմանն ուղղված քայլերից 7-ը, որոնցից 6-ով նախատեսված աշխատանքները կատարվել են սահմանված ժամկետում, 1 միջոցառման մասով ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ժամկետի երկարաձգման առաջարկություն՝ համապատասխան հիմնավորմամբ:

Միջոցառումների և դրանց իրականացմանն ուղղված քայլերի կատարման ընթացքի վերաբերյալ մանրամասն հաշվետվությունը ներկայացվում է ստորև.

#### **Կետր 302- Հայաստանի Հանրապետության տարածքի բազմակենտրոն զարգացման ապահովում**

Քայլ 1- Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» 2017-2024 թվականների ծրագրի շրջանակներում՝ Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում

• 302.1.1 ՀՀ Սյունիքի և Արարատի մարզերի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթեր (ժամկետ՝ 2018 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ)

ՀՀ Սյունիքի և ՀՀ Արարատի մարզերի բնակավայրերը քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ապահովելու նպատակով Կոմիտեի պատվիրատվությամբ իրականացվել է այդ մարզերի բոլոր համայնքները ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքները: Ծրագիրն ընդգրկում է 2017-2023 թվականները և նպատակ ունի ապահովել Հանրապետության բոլոր համայնքները տեղական մակարդակի ծրագրային փաստաթղթերով (գլխավոր հատակագծեր և գոտևորման նախագծեր):

Ծրագիրն ամբողջովին ավարտելուց հետո, նախատեսվում է, հիմք ընդունելով մշակված միկրոռեգիոնալ փաստաթղթերը, 2024 թվականին վերանայել ՀՀ տարաբնակեցման և տարածքների կազմակերպման գլխավոր նախագիծը (հաստատվել է 2003 թվականին, որից հետո ենթարկվել է մոնիթորինգի ընդամենը մեկ անգամ): ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծը հանդիսանալու է ՀՀ տարածքային զարգացման 2024-2040 թթ ուղղակարգական փաստաթուղթ:

Քայլ 2 - «Սևան» ազգային պարկի Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության մշակում (ժամկետ՝ 2018-2019 թվականներ)

Սևանա լճի կենտրոնական գոտու ռեկրեացիոն գոտիների զարգացման նպատակով իրականացվում են «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության» նախագծային աշխատանքները: Նշված հատվածում նախագծվում են հետիոտն ծովափնյա ճեմուղի, հյուրանոցային, ժամանցային, քրթեջային և այլ գործառնական գոտիներ, նախագծի իրականացումը խթանելու է ներդրումային ծրագրերի հոսքն այս տարածաշրջան:

Այդ կապակցությամբ, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N1314-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան ՀՀ քաղաքաշինության կոմիտեին տրամադրվել է 12 մլն. ՀՀ դրամ «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագիծ և քաղաքաշինական կանոնադրություն» նախագծային աշխատանքների իրականացման համար: 2018 թվականի դեկտեմբերի 21-ին կայացել է մրցույթ, որի արդյունքում հաղթող ճանաչված «Արխիտոն» ՍՊ ընկերության հետ իրականացվում է պայմանագրի կնքման գործընթացը:

Քայլ 3 - «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N728-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում (ժամկետ՝ 2018-2019 թվականներ)

1. Երևանի փոքր կենտոնի բեռնաթափման և քաղաքի արվարձանների զարգացման նպատակով Կոմիտեի կողմից մշակվել և շահագրգիռ մարմինների հետ ու հանրային քննարկման փուլում է գտնվում «Երևան քաղաքի վարչական սահմանում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքներ առանձնացնելու և ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N728-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

2. Նախագծի ընդունումը հնարավորություն կստեղծի մշակել

- Երևանի փոքր կենտրոնի մանրամասն գոտևորման նախագիծը և գոտիներում սահմանվող կանոնակարգերը,

- յուրաքանչյուր թաղամասի և հիմնական փողոցների կառուցապատման կանոնները,

- առկա քաղաքաշինական իրավիճակի կանոնակարգմանն ուղղված ծրագրերը և միջոցառումների ցանկը:

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված կարծիքը, նախագիծը համապատասխան հիմնավորմամբ ևս մեկ անգամ կներկայացվի Երևանի քաղաքապետի քննարկմանը:

Քայլ 4 - «ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N408 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում (ժամկետ՝ 2018 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ)

Կոմիտեի կողմից մշակվել և 2018 թվականի դեկտեմբերի 24-ի N01/11.2/6346-18 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N408 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Նախագծով առաջարկվում է.

- համապատասխանեցնել նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման ընթացակարգն օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման դրույթներին,

- սահմանել միասնական մոտեցումներ գործառնական գոտիների անվանումների, դրանց հապավումների, կոդերի և գծագրերում պայմանական նշանների նկատմամբ,

- հաստատել կառուցապատման չափորոշիչների ու թույլատրելի օգտագործման ձևերի ամփոփ աղյուսակների օրինակելի ձևերը,

- սահմանել գոտիներում թույլատրելի օգտագործման (հիմնական և ոչ հիմնական՝ ուղեկցող) ձևերի ցանկը,

- ներառել դրույթներ, գոտևորման նախագծերի՝ ստեղծվող երկրատեղեկատվական համակարգի միասնական պահանջներին համապատասխանության մասով:

**Կետ 305 - Ճարտարապետա-շինարարական նախագծերի և շինարարության որակի բարելավում.**

Քայլ - 305.1 «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի վերանայում (ժամկետ՝ 2018 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ)

Նախորդ տարիներին նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը հաստատվել են ՀՀ քաղաքաշինության նախարարի, այնուհետ՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի հրամաններով:

ՀՀ Սահմանադրության (06.12.2015թ. փոփոխություններով) 6-րդ հոդվածն ուժի մեջ մտնելուց հետո՝ նույն հոդվածի դրույթների համաձայն, պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Նույն կետով նախատեսված է, որ սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել քաղաքաշինության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի, նորմատիվ-

տեխնիկական փաստաթղթերի հաստատման մասով քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի իրավասությունները և դրանք ամրագրել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում:

Այդ կապակցությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կոմից մշակվել և սահմանված կարգով 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 01/14.2/5661-18 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ««Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը:

ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 24-ի N 02/24.4/43592-18 հանձնարարականով առաջարկվել է նախագիծը ներկայացնել նոր կազմավորվող կառավարության քննարկմանը:

Քայլ - 305.2 Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերը (շինարարական նորմեր, կանոնների հավաքածուներ, ստանդարտներ, կարգեր, կանոններ) հաստատելու մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշումների ընդունում

• 305.2.1 (ժամկետ՝ 2018 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ)

Կոմիտեի ու Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջև 2017 թվականի նոյեմբերի 6-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/21 պետական գնման պայմանագրի համաձայն մշակվել է ՀՀՇՆ 52-01- «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» ՀՀ շինարարական նորմերը,

• 305.2.2 (ժամկետ՝ 2018 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ)

Կոմիտեի ու Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջև 2017 թվականի նոյեմբերի 6-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/21 պետական գնման պայմանագրի համաձայն մշակվել է ՀՀՇՆ 53-01- «Պողպատե կոնստրուկցիաներ» ՀՀ շինարարական նորմերը,

• 305.2.3 (ժամկետ՝ 2018 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ)

Կոմիտեի ու «Հայնախագիծ» բաց բաժնետիրական ընկերության միջև 2017 թվականի օգոստոսի 28-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1-2 պետական գնման պայմանագրի համաձայն մշակվել է ՀՀՇՆ 31-03- «Հասարակական շենքեր և շինություններ» ՀՀ շինարարական նորմերի նախագիծը, համաձայնեցվել է շահագրգիռ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների հետ,

• 305.2.4 (ժամկետ՝ սկիզբը 2018 թվական, ավարտը 2019 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ)

Կոմիտեի ու «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության միջև 2018 թվականի ապրիլի 25-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/2 պետական գնման պայմանագրի համաձայն ՀՀԿՀ 40-01.02- «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերը գտնվում են մշակման փուլում (ժամկետ՝ սկիզբը 2018 թվական, ավարտը՝ 2019 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ):

305.2.1, 305.2.2 և 305.2.3 կետերով նշված շինարարական նորմերի հաստատումը նախատեսվում է 305.1 կետով նախատեսված՝ ««Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո՝ երկամսյա ժամկետում, ինչը պայմանավորված է նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի հաստատման մասով քաղաքաշինության բնագավառի լիազոր մարմնին համապատասխան իրավասություն վերապահելու հետ:

Այդ նպատակով ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 667-Լ որոշմամբ հաստատված աշխատակարգի 5-րդ կետին համապատասխան մշակվել և Կոմիտեի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N01/14.2/6071-18 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով ներառված է նաև փոփոխություն Ծրագրի 305.2.1, 305.2.2, 305.2.3 կետերի ժամկետների մասով:

Սակայն, ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի N N02/36.3/42211-18 հանձնարարականով առաջարկվել է ձեռնպահ մնալ ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N1030-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելուց՝ նկատի ունենալով, որ առաջիկայում որոշումը ենթակա է վերանայման:

***Կետ 306 - Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացում՝ սեյսմիկ ռիսկի նվազեցում.***

Քայլ - 306.1 «Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում (ժամկետ՝ սկիզբը 2018 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ)

Մշակվել է «Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Սակայն, ՀՀ կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների Ծրագրի հաստատումից հետո համաձայնություն է ձեռք բերվել Կլիմայի կանաչ հիմնադրամի (ԿԿՀ) կողմից ֆինանսավորվող և Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից իրականացվող «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի շրջանակներում հասարակական և բազմաբնակարան շենքերի անձնագրերի օրինակելի ձևերի մշակման և շենքերի տեղեկատվական համակարգի ներդրման համակարգչային ծրագրի տեխնիկական առաջադրանքի կազմման աշխատանքների (այսուհետ՝ Աշխատանքներ) կատարման վերաբերյալ:

Աշխատանքների կատարման մասով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող կազմակերպության հետ սահմանված կարգով կնքվել է պայմանագիր, որի համաձայն Աշխատանքները նախատեսվում է ավարտել 2019 թվականի հունվարի վերջին և նախատեսվում է վերլուծել հանրապետությունում շենքերի անձնագրավորման օրենսդրական դաշտը, առկա վիճակը և խոչընդոտները, միջազգային լավագույն փորձը, հասարակական և բազմաբնակարան շենքերի համար մշակել անձնագրերի օրինակելի ձևեր, մի քանի շենքի օրինակով գնահատել անձնագրավորման գործընթացի արժեքը, մշակել անձնագրերի կազմման/լրացման ուղեցույց, դրա հետ մեկտեղ՝ ուսումնասիրել շենքերի տեղեկատվական համակարգի ներդրմանն առնչվող օրենսդրական դաշտը, միջազգային փորձը, մշակել շենքերի տեղեկատվական համակարգի համակարգչային ծրագրի տեխնիկական առաջադրանք:

Վերը նշվածի համատեքստում նպատակահարմար է դիտարկվել միջոցառման կատարման ժամկետը երկրաձգելու միջոցով վերոնշյալ Աշխատանքների արդյունքներն օգտագործել Միջոցառման իրականացման համար, ինչը հնարավորություն կտա առավել հիմնավոր և բազմակողմանի կանոնակարգել շենքերի և շինությունների անձնագրավորման հետ կապված հարցերը:

Այդ կապակցությամբ, ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N667-Լ որոշմամբ հաստատված աշխատակարգի 5-րդ կետին համապատասխան մշակվել և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N01/14.2/6071-18 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N1030-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվել է միջոցառման իրականացման ժամկետ սահմանել 2019 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակը:

Սակայն, ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի NN02/36.3/42211-18 հանձնարարականով առաջարկվել է ձեռնպահ մնալ ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N1030-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելուց՝ նկատի ունենալով, որ առաջիկայում որոշումը ենթակա է վերանայման:

### ***Կետ 309 - Աղետի գոտու հիմնախնդիրների կանոնակարգում***

Քայլ 1 - Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագրի ավարտ (ժամկետ՝ սկիզբը 2018 -2020 թվականներ)

Ծրագրի շարունակական իրականացման համար ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հատկացվել է 460.0 մլն. դրամ, որից 458,118.0 հազ. դրամը ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի N1339-Ն որոշմամբ ուղղվել է ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում Ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների համար Ծրագրի շրջանակներում կառուցապատողի կողմից շինարարությունն սկսած՝ առավել բարձր պատրաստականության թվով 44 կիսակառույց բնակելի տների շինարարության ավարտմանը:

Դրա հետ մեկտեղ, Ծրագրի շրջանակներում 2018 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N424-Ն որոշմամբ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցներից 1,882.0 հազ. դրամի հաշվին կանոնակարգվել են՝

1) Ծրագրի շրջանակներում կառուցապատողի կողմից Ծրագրի շահառուներից ձեռքբերված տնամերձ թվով 232 հողամասերը՝ կատարված բարելավումներով (կառուցված շինություններով) հանդերձ նախկին սեփականատերերին վերադարձնելու հետ կապված հարցերը,

2) ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N812-Ա որոշման համաձայն ՀՀ Լոռու մարզպետարանին ամրացված թվով 258 բնակելի տները Ծրագրի շահառուներին նվիրելու գործընթացի ապահովման՝ պայմանագրերի նոտարական վավերացման համար անհրաժեշտ ֆինանսավորման հարցը:

2. ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 6-ի N303-Ն որոշմամբ՝

1) Ծրագրի շահառուներին հատկացված, սակայն դեռևս ՀՀ սեփականություն հանդիսացող բնակարանները (բնակելի տները) նվիրաբերվել են համապատասխան համայնքներին, որպեսզի վերջիններս շարունակեն Ծրագրի շահառուների հետ այդ բնակարանների նվիրատվության պայմանագրերի կնքման գործընթացը,

2) Ծրագրի շրջանակներում չբաշխված՝

ՀՀ սեփականությունը հանդիսացող բնակարանների (բնակելի տների) բաշխման և հատկացման իրավասությունը վերապահվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը:

3. ՀՀ կառավարության 2018 թվականի մայիսի 5-ի N527-Ն որոշմամբ Սպիտակ համայնքին են վերադարձվել Ծրագրի շրջանակներում Վարպետաց թաղամասի կառուցապատման նպատակով համայնքից ձեռք բերված հողամասերի չկառուցապատված մասը: